

Կապանում հարգեցին 22 տարի առաջ զոհված խաղաղ կապանցիների հիշատակը

Այսօր՝ դեկտեմբերի 12-ին, ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, մարզպետարանի և քաղաքապետարանի աշխատակազմերի, նրանց ենթակայությամբ գործող առողջապահական, ուսումնական և մշակութային հաստատությունների ներկայացուցիչներ հարգեցին Արցախյան գոյամարտի տարիներին հրետակոծությունների հետևանքով զոհված կապանցի խաղաղ բնակիչների հիշատակը:

Մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները Բաղաբուրջի հուշահամալիրում թարմ ծաղիկներ ու ծաղկեպսակներ դրեցին զոհերի հիշատակին կանգնեցված հուշաքարին:

Անմեղ զոհերի հիշատակը ներկաները հարգեցին մեկ րոպե լռությամբ: Ուղիղ 22 տարի առաջ՝ 1992թ. դեկտեմբերի 12-ին ադրբեջանական ինքնաթիռից արձակված ռումբի զոհ դարձան ու վիրավորվեցին Կապանի Շահումյան փողոցում հացի հերթում կանգնած տասնյակ կապանցիներ: